«ԳԻԻԼԱՍԱՐ»

(ԱՆՏԻՊ ՎԷՊԻԿԻՑ)

Տ ա տ ը

—Աշխարհ լինչ կասի, ա՛ղջիկ, սրաժիդ,
Ուզում ես կամովդ խանի ճանկ ընկնել.
Մեղք արի ա՛նդութ, խեղճ նշանաժիդ,
Զէ՞ որ երդուել ես նրան պատկանել։

Թ ո ռ ը

«Քաղցր է ինձ համար ազիզ նշանաժ,
Հոգիս որ ուզի, կը հանեմ, կը տամ.
Բայց հայրս Զաւադ խանի բերդն ընկաժ
Ինձ է ձէն տալիս. ես ո՞նց չը գնամ։

Թուր էլ շողացնեն, երես չեմ թեքիլ,
Թո՛ղ տուր ժամ առաջ Գեանջի բերդ հասնեմ,
Կրակ էլ ածեն դոգս, չեմ վախիլ,
Միայն քաջ հօրս երեսը տեսնեմ։

Զուր ես ուշացնում աղաչանքներով,
Մահ ու տարտարոս աչքի տակ ունեմ.
Գետ, անտառ, լեռներ կանցնեմ վազելով,
Միայն թէ հօրս վզով փաթաթուեմ։

Փառք պատիւներից վճռեց վեր դասել
Իմ սիրու համար բերդի սև օրը,
Զոհ կերթամ խանի կրակին ես էլ,
Միայն թէ բերդից փրկեմ իմ հօրը.

Քաղցր է ինձ համար ազիզ նշանաժ.
Հոգիս էլ ուզի, կը հանեմ, կը տամ.
Բայց հայրս, տա՛տի, խանի ճանկ ընկաժ
Ինձ է ձէն տալիս, ես ո՞նց չը գնամ։

Ս. ՔԱՄԱԼԵԱՆՑ

ԼՈՒՄԱՅ Ա.-Բ. 1897